ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

«01» մարտի 2018 թվականի № 28-Ա

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2014 թվականի դեկտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև Հայկական ատոմային էլեկտրակայանի 2-րդ էներգաբլոկի շահագործման ժամկետի երկարաձգման հարցում համագործակցության մասին» համաձայնագրի 2-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն նշանակված լիազոր կազմակերպություններ՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ) և «Ռուսատոմ Սերվիս» բաժնետիրական ընկերության միջև 2018 թվականի փետրվարի 12-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի փետրվարի 1-ի № 4-27 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացումն ապահովող լրացուցիչ համաձայնագրի լրացումների նախագծերի (այսուհետ՝ Նախագծեր) քննարկման և Ծրագրի դրույթներին և պահանջներին համապատասխանության գնահատման նպատակով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Ստեղծել փորձագիտական հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ հետևյալ կազմով.

Մ.Վարդանյան - «ՀԱԷԿ» ՓԲԸ գլխավոր տնօրեն (Հանձնաժողովի նախագահ),

Ա.Բաղդասարյան - «ՀԱԷԿ» ՓԲԸ գլխավոր տնօրենի առաջին տեղակալ,

Ա.Գրիգորյան - «ՀԱԷԿ» ՓԲԸ գլխավոր տնօրենի առաջին տեղակալ, տեխնիկական տնօրեն, գլխավոր ճարտարագետ,

Գ.Սևիկյան - «ՀԱԷԿ» ՓԲԸ շահագործման ժամկետի երկարացման ծրագրի գծով տնօրեն,

Է.Սանամյան - «ՀԱԷԿ» ՓԲԸ ֆինանսատնտեսագիտական հարցերի գծով տնօրեն,

Դ.Թովմասյան - «ՀԱԷԿ» ՓԲԸ ֆիզպաշտպանության և ռեժիմի գծով տնօրեն,

Տ.Վարդազարյան - «ՀԱԷԿ» ՓԲԸ իրավապայմանագրային բաժնի պետ-գլխավոր իրավախորհրդատու:

2. Հանձնաժողովին՝ Նախագծերի քննարկման և Ծրագրի դրույթներին և պահանջներին համապատասխանության գնահատման ընթացակարգը սահմանելու նպատակով հաստատել Հանձնաժողովի աշխատակարգ, աշխատակարգում նախատեսելով, որ քննարկման և գնահատման արդյունքների հիման վրա հավանության արժանացած Նախագծերը նշագրվում են Հանձնաժողովի բոլոր անդամների կողմից, որով Հանձնաժողովի անդամներն ստանձնում են համապարտ պատասխանատվություն:

/ ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ